

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆ

«Կապիտալ Ինվեստմենթս» ՓԲԸ-ի բաժնետերերին և տնօրենների խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Կապիտալ Ինվեստմենթս» ՓԲԸ-ի և նրա դուստր ընկերության՝ կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 31 դեկտեմբերի 2013թ. և 2012թ. դրությամբ, 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Դեկլարության պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Դեկլարությունը պատասխանատու է համախմբված ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համապատասխան սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է՝ մեր կողմից իրականացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտը իրականացրեցինք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ համախմբված ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողություններից, ներառյալ՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները նաև ներառում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում խմբի 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը և նույն ամսաթվին ավարտված ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Սրբուհի Ջակոբյան
Գործադիր տնօրեն



Արփիկե Ղևոնդյան
Աուդիտի ղեկավար

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
14 ապրիլի, 2014թ.